ՆԱԽԱԳԻԾ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N – Ա

«ՀԱՅԱՍԻ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

Թույլատրել «Հայասի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2010 թվականի հուլիսի 19-ի թիվ C 3373, 2011 թվականի հունվարի 31-ի թիվ C 404, 2011 թվականի հունվարի 31-ի թիվ C 405, 2011 թվականի հունվարի 31-ի թիվ C 406, 2011 թվականի ապրիլի 8-ի թիվ C 1767 և 2012 թվականի ապրիլի 12-ի թիվ C 1843 հայտարարագրերով «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծված և մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը հանձնված ապրանքների նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմի ժամկետի երկարաձգումը մինչև 2014 թվականի հունվարի 1-ը:

Վ. Ավանեսյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍԻ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Անհրաժեշտությունը

ՀՀ կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է՝ «Հայասի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ՀՀ ներմուծված 49749.3 լ (ԱՏԳ ԱԱ 22083088) շոտլանդական վիսկու սպիրտ, 151758.1 լ (ԱՏԳ ԱԱ 22071000) վիսկու էթիլ սպիրտ և 22500 լ (ԱՏԳ ԱԱ 22085019) ջին արտահանելու անհրաժեշտությամբ :

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

«Հայասի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2010 և 2011 թվականների ընթացքում Մեծ Բրիտանիայից և Ուկրաինայից «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ՀՀ տարածք է ներմուծել 49749.3 լիտր շոտլանդական վիսկու սպիրտ, 151758.1 լիտր վիսկու էթիլ սպիրտ և 22500 լիտր ջին: Նշված ռեժիմի համար նախատեսված մեկ տարի ժամկետը լրանալուց հետո վերոհիշյալ ապրանքների չվերաարտահանված մնացորդները հանձնվել է մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը: Ելնելով վերոգրյալից անհրաժեշտություն է առաջանում «Հայասի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմի ժամկետը երկարաձգել վեց ամսով:

3.Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Գործարար միջավայրի բարելավում, արտահանման խթանում:

4.Կարգավորման նպատակը և բնույթը

ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ կստեղծվի հնարավորություն վերամշակված աշխատանքները ավարտելու և արտադրանքը արտահանելու համար:

5.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

6.Ակնկալվող արդյունքը

Ընկերության ֆինանսական վիճակի կայունացում, ստեղծված աշխատատեղերի պահպանում:

7.Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՀՐԱՄ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍԻ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.

   ՀՀ կառավարության որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.

   Համապատասխանում է միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին:

3. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՀՐԱՄ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍԻ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայասի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառված «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմի ժամկետի երկարաձգումը թույլատրելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին տեղեկանքը չի լրացվում, քանի որ որոշման ընդունումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցություն չի ունենում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՀՐԱՄ ԱՎԱՆԵՍՅԱՆ